

ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄ

Վերջերս գումարվել է ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմի պատգամավորական ժողովը, որից հետո թեմական առաջնորդ Տ. Վաչե արքեպ. Հովսեփյանի նախագահությամբ թեմական խորհրդի առաջին նիստում ընտրվել է թեմական խորհուրդ, հետևյալ կազմով.

Ճան Մ. Պոզաճյան՝ ատենապետ
Մայք Կարուկյան՝ փոխատենապետ
Մուշեղ վրդ. Թաշճյան՝ քարտուղար
Բապրոթ Պարսամ՝ գանձապահ

Խորհրդականներ՝

Արշակ ծ. վրդ. Խաչատուրյան
Շահե ավ. քհն. Սեմերճյան
Տաթև քհն. Թաթուլյան
Արմեն Մենենտյան
Գրիգոր Չերեզյան
Ճան Գազանճյան
Դոկտ. Կերի Լյուլեճյան

Թեմական խորհուրդը ներկա տարեշրջանի համար արդեն իսկ կազմել է իր գործունեության ծրագիրը, ըստ որի «առաջնորդ սրբազան հոր նախաձեռնությամբ, հոգևոր հովիվների և նվիրյալ ազգայիններու քաջալերությամբ հայ մեծասքանչ լեզվի ուսուցումը, մասնավոր ուշադրության կարժանանա արևմտյան թեմեն ներս»:

Սեպտեմբերի 13—14 օրերին Վեն Նայս քաղաքի Ս. Պետրոս Հ. Բ. Ը. Միության մշակութային շենքի պաշտոնական բացումը տեղի կունենա ձեռամբ առաջնորդ սրբազանի «հոգեկան նոր ուրախություն մը պատճառելով համայն հավատացյալներուն»:

Վերոհիշյալ Մշակութային համալիրի կառուցման իրենց սրտագին մասնակցությունն են բերել Ս. Պետրոս եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Շահե ավ. քհն. Սեմերճյանը, ծխական խորհուրդը և եկեղեցական այլ մարմիններ:

Մշակութային սրահը կոչվել է «Գարակյոզյան Սրահ», որը «պիտի ծառայե որպես լսարան դասախոսությանց, նվագահանդեսներու, համաժողովներու, ցուցահանդեսներու և այլ ձեռնարկներու համար»:

Շուտով ավարտվելու վրա է Բասատինայի Ս. Գրիգոր Հայց. Եկեղեցու կիրակնօրյա և շաբաթօրյա հայկական վարժարանի շենքը:

Լոս Անջելոս քաղաքի Ս. Հակոբ եկեղեցին «ևս պաշտոնապես բացավ դռները «Դոկտ. Լևոն Գասապյան» շաբաթօրյա վարժարանին, որպեսզի շատ մը ծնողներ և հայկական տոհմիկ դաստիարակության ծարավը ունեցող ազգայիններ համախմբվին եկեղեցվո հոգևոր հովիվ Տ. Արշակ ծայրագույն վարդապետ Խաչատուրյանի շուրջ»:

Վերջերս թեմական առաջնորդ Տ. Վաչե արքեպիսկոպոսը «մեծ հանդիսությամբ պաշտոնապես հիմնարկեքի արարողությունը կատարեց Թեքեյան Մշակութային Միության կողմե ծրագրված հայկական ամենօրյա վարժարանի մը, առաջնորդարանին կից, բարերարությամբ տեր և տիկին Արշակ Տիգրանյանի»: Նորակառույց վարժարանը կոչվելու է «Արշակ Տիգրանյան Վար-

ժարան»: «Առաջնորդարանի կողքին հայկական ամենօրյա վարժարան մը ունենալով կարելի պիտի ըլլա վերազարթնումի նոր շրջան մը ունենալ հայահոծ Հոլիվուտի մեջ»:

Ուրախալի է արձանագրել, որ վերջերս «արևմտյան թեմեն ներս հոգևոր ծառայության նվիրվող պաշտոնյաներու թիվը կավելնա շնորհիվ առաջնորդ սրբազան հոր և հոգևոր հովիվներու ջանքերուն»: Տ. Վաչե արքեպիսկոպոսը այս մտածումով Ֆրեզնոյի հայոց նորակառույց եկեղեցում կատարում է երեք սարկավագների և վեց կիսասարկավագների ձեռնադրությունը և դպրության աստիճան է շնորհում հինգ երիտասարդների, որոնք «եկեղեցվո հոգևոր հովիվ Տ. Շահե ավ. քհն. Ալթունյանի կողմե մարզված ու պատրաստված էին, իրենց ծառայության դաշտը ընդարձակելե առաջ»:

Կիրակնօրյա վարժարանների վերացման առիթով, ուսուցիչ-ուսուցիչների համար տեղի են ունենում մասնավոր դասընթացներ, կազմակերպվում՝ հանդիսություններ թեմի երեք շրջանների մեջ՝ գլխավորությամբ թեմի «Երիտասարդաց գործունեության և քրիստոնեական դաստիարակության համակարգիչ Տ. Վարդան քհն. Գասպարյանի և գործակցությամբ հոգևոր հովիվներու»: Դասախոսությունների գլխավոր նյութերն են եղել. «Հիսուս Քրիստոս և ամենասուրբ Երրորդություն», «Եկեղեցին և Ս. Գիրքը»:

Հայց. Եկեղեցու Երիտասարդաց տարեկան «Մշակութային Առանձնացում»-ից հետո, տեղի է ունենում արևմտյան թեմի տարեկան ամառային ճամբարը, երկու շաբաթ տևողությամբ, մասնակցությամբ 475 երիտասարդ—երիտասարդուհիների, գլխավորությամբ և ղեկավարությամբ Տ. Վաչե արքեպիսկոպոսի, հոգևոր հովիվների. «Եկեղեցական արարողություններեն զատ աշակերտները կանոնավոր կերպով մասնակցեցան կրոնքի, արվեստի, լեզվի, երգի և այլ դասավանդությանց»:

Այս տարի արևմտյան թեմի եկեղեցականաց տարեկան առանձնացումը տեղի է ունեցել Ֆրեզնոյի շրջանում, առաջնորդ սրբազան հոր նախագահությամբ: Առանձնացումին մասնակցել է նաև Տ. Տիրան արքեպ. Ներսոյանը, որը «իր գործունյա բաժինը բերավ առանձնացման հաջողության»:

Եկեղեցականաց առանձնացման այդ օրերին «Հայց. Եկեղեցին, մեր թեմն ու ծուխերը հուզող հարցերու քննութենեն, գաղափարներու փոխանակումեն և տրված որոշումներեն ետք» տեղի են ունեցել հետևյալ բանախոսությունները. «Մահ, մեռնողներ և չարչարանք», բանախոս՝ Տ. Գևորգ քհն. Առաքելյան, «Դավիթ Անհաղթ»՝ Տ. Մուշեղ վրդ. Թաշճյան, «Երուսաղեմի մեջ կատարված խորհրդակցական համագումարը»՝ Տ. Արշակ ծ. վրդ. Խաչատուրյան, «Ներսես Լամբրոնացի»՝ Տ. Նարեկ վրդ. Մարֆազյան, «Ուխտագնացություն դեպի Ս. Էջմիածին և Մայր Հայրենիք»՝ Տ. Վարդան քհն. Տյուլկերյան, «Եկեղեցին, հայության ապագան արտասահմանի և հատկապես Ամերիկայի մեջ»՝ Տ. Տիրան արքեպ. Ներսոյան, «Թեմական հարցեր»՝ Տ. Տաթև քհն. Թաթուլյան:

«Տարեկան Առանձնացումը լավագույն արդյունքով պսակվեցավ առաջնորդ սրբազան հոր տված շինիչ տեղեկություններով, քաջալերական խոսքերով և անսակարկ ու նվիրյալ ոգիով ծառայելու հորդորներով»:

ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմի մասին այս տեղեկությունները քաղել ենք Տ. Սիփան վրդ. Մխսյանի՝ խմբագրությանս ուղղած տեղեկություններից, որոնց համար հայտնում ենք մեր ջերմ շնորհակալությունը: